


# Կրկնակ Յորելեանները

412 - 1912 եւ 1512 - 1912

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Ե.ի հրահանգով, Մեսրոպեան սառնորո զիւսին 1500 ամեակին եւ Հայ Տպագրութեան 400 ամեակին առթիւ, բոլոր աշխարհիս վրայ



Գուգ. Գարուի Պատրիարքանիս Մայր Եկեղեցին

գտնուող Հայեր սարքեցին կրօնական, դպրոցական ու ժողովրդային փառաշուք հանդէսներ, որոնք օրեր տեւեցին: — 'Ի Վաղարշապատ (բուն կենդրոնն այս Կրկնակ Յորելեաններուն հանդիսութեանց), 11 Հոկտ. 1912ի երեկոյին կատար-

ուեցաւ նախատօնակ Թարգմանչաց յիշատակին : Յաջորդ օր՝ պատարագ Ս . Մեսրոպի գերեզմանին վրայ յՅշական , ապա պատգամաւորներու ճառեր եւայլն : Կիրակի , Հոկտեմբեր 14ին Մայր Տաճարի մէջ պատարագ և հոգեհանգիստ «գրի և տպագրութեան վաստակաւորների յիշատակին» , որմէ յետոյ շքեղ ցերեկոյթ՝ երգերով ու բանախօսութիւններով : Այս բոլորը կրկնուեցան նոյն շքեղութեամբ 1913ին եւս :—Իսկ Կ . Պօլիս որ Տաճկահայոց կենդրոնը կը համարուի , քաղաքական աննպաստ պարագաներու բերամբ հարկադրուած էր յետաձգել Մեծ Յորելեանները , տօնելով զանոնք վերջացող տարւոյն Հոկտ . 12ին՝ չր . օր : Կեդրոնի Վարչութեան հրաւէրով՝ պօլսահայ մտաւորականներէ , տպարանատէրերէ և առեւտրականներէ կազմուած Յանձնախումբ մը յաւերժացուց ՍՍ.ՀՍ.Կ-ՄԵՍՐՈՊԻ և առաջին տպագրիչ Մեղարգարտ ՅԱԿՈՒԻ յիշատակները , Գում-Գարուի պատմական Մայր եկեղեցիին մէջ : Իսկ ժողովրդական խանդավառ հանդէսներ տեղի ունեցան վաղայաջորդ օրը , կիրակի , մայրաքաղաքիս բոլոր արուարձաններուն մէջ , ինչպէս նաեւ գաւառները :—Աւելցունենք թէ այս առթիւ կազմուելիք կրթական փօնի մը՝ ՚ի նպատ , Ազգ . ժողովի նախաձեռնութեամբ հիմը դրուեցաւ հանդանակութեան մը որ տարւոյս ընթացքին եւս բաց պիտի մնայ և որ սակայն չենթադրուիր թէ պիտի կարենայ հասնիլ այն հսկայ գումարին զոր հաւաքեցին Ռուսահայք : Եւ որպէս զի առ հասարակ ժողովրդեան բոլոր դասակարգերը կարենան մասնակցիլ այս հանդանակութեան , Յորելեանական Յանձնախումբը հրապարակ հանեց զհզարուեստական «քարթ-բօսթալ»ներ , զարդանշաններ , Կոմիտաս Վարդապետէ ձայնագրուած «Ո՛վ մեծաաքանչ զուլեզու»ն , եւն . եւն . :

